

կան պարտէզ մըն էր Տեմպեայ հովիտը իծեսաղից մէջ, խիստ երեւի, զորն որ լիդմառոս, լիսա և Պեղիսն լեռները կը պատէին, և ուսկից որ կ'ընթանար Պիենէն գետը, և մշտադալար անտառ մը միշտ հովանի կ'ընէր անոր վրայ, և լուսագոծ բագինը մարգով ծածկուած էր, և կ'ըսուէր թէ հոն մշակուած է դափնին: Այսն իսկ աստուածները հնոց բաժիննայելով Տեմպեայ ձորը կու գային զբուելու համար. վասն զի տեղւոյն ընդարձակութիւնը, հովանիներուն զովութիւնը և օդոյն քաղցրութիւնը բոլոր աշխարհիս ամէն գեղեցկութիւններէն աւելի ախորժելի կ'ընէր զանիկայ¹: Ուրիշ ասոնց նման նուիրեալ անտառներուն վրայօք հին պատմիչներ մեզի յիշատակութիւններ թողուցած են, զորոնք համառօտութեան համար զանց կ'առնենք յիշատակելու. թէպէտ և մեծագոյն մասն ալ կորսուած է այն հեղինակներուն:

(ՊԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒ)

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Գ.

Կարփանեան կազմարանք²: (Երես 74)

1. Խնդպէս ասջի յօդուածով տեսանք, կալվանածոյլ արուեստին զլիսաւոր վախճանն է, որ և իցէ մետաղ լուծել և ուզած նիւթի մը վրայ նստեցընել, որ երկու կերպ կրնայ ըլլալ. մէյմը այնպէս ընելով որ երթայ կազապարին ամէն կողմը նստի և անոր ձիշգձել առնէ, բայց առանց ամենեին անոր հետ միանալու, այնպէս որ կարենայ մարդ ուզած ատեն կազպարին վըրայէն զանիկայ բաժնել, իբրև թէ անոր վրայ ձուլած թափած ըլլար. և

¹ Տեմպեայ հովանին վրայ ուրիշ անդամ իսուածնք բազմավիս մէջ. Հու. Ժ.Ա. էջ 334.

² Գլ. Appareils Galvaniques.

ասկէ կ'առնու այս արուեստս իր կալվանածոյլ անունը: Կակ երկրորդ կերպը որ երթայ մետաղը կազապարին վրայ նստի և անոր հետ անբաժանելի կերպով կապուի միանայ, որ ձիշգ իսուելով կալվանածոյլը ըսուիր. հապա կերպ մը մետաղազօծումն ելեքտրութեան ձեռքով եղած, որ կրնայ աւելի կալվանազօծումն ըսուիր: Ըրդ այս երկու կերպիս համար ալ կրնանք թէ Պարզ և թէ հաղաղրեալ ըսուած կազմարանները գործածել ելեքտրական հոսանքը առաջ բերելու և միանգամայն այդ արհեստը կատարելու համար: Այս և առաջ մենք ասոնց ստորագրութիւնը ընենք, որ կարենանք բացայայտ իմանաւալ ասոնց իրարմէ ունեցած զանազանութիւնը:

2. Պարզ կալվանան. — Պարզ կազմարաններուն մէջ ամենէն աւելի գործածականն է 1 Զեղյն մէջ զրածնիս:

Ճ 4.

Պարզ Ա. ապակի կամ յախճապակի մեծ անօթին մէջ զիր մէկ ուրիշ Ս աման մը աւելի նեղ տրամագծով և ծակուտ կէն նիւթէ, ինչպէս է չապիկած հողը կամ չեփած յախճապակին: Առջի անօթին մէջ լեցուր ուզած յարմար մետաղդ լուծուած բայց յագեալ¹, որ են-

1. Որովհետեւ այս յօդուածներուս մէջ շատ անգամ հարկ պիտի ըլլայ գործածել Յաֆ-հ, Լուծուն, Բի-բաշ-շա-ն բառերը, և ասոնցմէ ելածները, անոր համար հարկաւոր կը սեպենք ասոնց վրայ համառօտ տեղեկութիւն մը տալ: — Լուծունի կըսուի այն մարմինը որ հեղանիւթի մէջ իր մասնը կունքներէն քայլայելով աչքէ կը կորսուի, առանց հեղանիւթին թափանցկութիւնը այլայլելու. և վերջը հեղանիւթը ցնդելով՝ նորէն իրեն առջի վիճակը կը դառնայ. ինչպէս է ըսենք՝ սովորական աղջ, չափարը, և այլն: Եւ իրեն այդ հեղուկ վիճակը՝ Լուծուն կըսուի: Բայց թէ որ այդ լուծանելի մարմինը կամ հեղանիւթը իրեն բնաբանական կամ բնալուծական յատկութիւնները կորսընցընէ, այն ատեն Տարւածուն կըսուի. վասն զի իրեն բազկացուցիչ մասնկունքը իրարմէ կը զատուին: Իսկ այն մարմինները որ հեղանիւթը կը պատուին միայն, և կ'երթան տակը դիրսի պէս կը նստին առանց փոխուելու, Առծանելի կըսուին: Երբոր լուծող մարմինը այնշափի հաս-



թաղրենք թէ ծ պղնձի ծծմբուտը ըլւայ , որ է կ կաղապարներուն վրայ նրատեցրնել կ'ուզես . իսկ ներսի Ս ամանին մէջն ալ լեցուր ծծմբային թթուն թեթև , այսինքն իր 12րդ կամ 13րդ ծանրութեանը չափ ջրի հետ խառնած , և ասոր մէջ խոթէ ջ զինկէ թիթեղը տափակ կամ գլանածն : Այս զինկին վերի կողմէն պտուտակով սղմած և միացուցած պիտի ըլլան արոյրէ թելերով է ի կաղապարները , որոնք դէպ 'ի մեծ զրսի անօթը կլորած և անոր մէջէն կախուած են զինկին զուգահեռական :

3. Այս նաև ուրիշ կերպ մըն ալ , քիչ մը առջինէն տարբեր , որ այս կերպով գրեթէ կը ստորագրէ Պէքրէլ . Ուղանսկիւնի փայտէ մնտուկ մը առ , և ներսի կողմէն այնպիսի նիւթով մը ծեփէ , որ մետաղային նիւթը զանիկայ չկարենայ ուտել , ինչպէս է ծոռչյին ոստղ՝ ըսուածը . և այս մնտուկը մէջ տեղէն երկու բաժնէ անջրաբետով մը , որ կալվանեան գործեաց մէջ մասնաւոր անուամբ Մէջնադակ՝ կը կոչուի . ասիկայ այնպի-

նի , որ ալ աւելի մարմին չկարենայ լուծել և դադրի . այն ատեն Յադէալ կըսուի . բայց թէ որ իր բարեխառնութեան աստիճանը բարձրացընենք , աւելի քանակ կը լուծէ , և այն ատեն Վէրտադէ կըսուի լուծումը . բայց երբոր սկսի պաղիլ , աւել ցուցած տաքութեան ուժէն լուծուած մասը կը սկսի թանձրանալ և ամանին տակը նստիլ . և այն մասնկունքը բազմանկիւնի այլ և այլ երկրաչափական ձևեր կ'առնուն բիւրեղին նման . և այս է Բիւրեղայ-շառակ և Բիւրեղանաւըսածնիս , որ գիւրաբեկ փշուն կ'ըլլայ . ինչպէս է հանքային կամ ծովէն հանած աղը , պղնձի ծծմբուտը , և այլն :

1 Գլ. Glu marine. Ասիկայ ամուռ կերպով կացընելու նիւթ մըն է . շատ ատեն չէ որ գտուած է Լոնտրա . և այսպէս կը շնուռի . 10 տրէմ առաձգական խէժ (Գլ. Gomme élastique) խառնէ կէս հոխա ձիւթի ոդիքի (Գլ. Huile essentielle de goudron. ՏՀ. Գուրչուն էալլ) հետ որ լաւ մը հալի , և տասը օրի չափ թող որ սերի պէս մակարդի . վերջը առ երկու մաս ծանրութեամբ լուն կամ լուն (Գլ. Laque) ըսուած խէժէն և մէկ մաս այդ լուծուած նիւթին հետ խառնէ , ու տաքը նիւթը թերթ թերթ պնդացու : Ասիկայ երբ ուղենաս գործածել , սասաիկ տաքութեամբ պէտք է հալեցընել . այսինքն ինչուան 120⁰ հարիւրամասնի չափ : Այս նիւթը մտքէ չանցած մածոցիկ ոյժ ունի :

2 Գլ. Diaphragme , որ կալվանականութեան մէջ բարդին երկու հեղանիւթները իրարմէ զատող նիւթն է :

սի նիւթէ մը շննած պիտի ըլլայ , որ հեղանիւթ ծծէ , ինչպէս ընդհանրապէս բարակ կաշին կամ մազաղաթը . բայց աւելի լաւ է , կաղպար շինելու գաճգործածել բայց շատ հաստ չըլլայ , հապա այնչափ որ երկու հեղանիւթները իրար մէ զատէ , և իր մէջէն անցած ելեքտրական հոսանքին , որչափ կարելի է , քիչ արգելք ըլլայ : Արդ այս երկու խորշերէն մէկուն մէջ լից պղնձի ծծմբուտը , կամ ուրիշ որ և իցէ աղ մը պաղ ջրով լուծուած և յագեալ . ասոր մէջ պիտի կախուած ըլլան կաղապարները միջնափակէն քանի մը հարիւրորդամեղը հեռու . և ասոնք միացած պիտի ըլլան հաղորդիչ թելերով զինկի թիթեղին հետ , որ երկրորդ խորշին մէջ պիտի ըլլայ թեթև թթուախառն ջրի մէջ թաթխուած , և միջնափակէն հարիւրորդամեղը միայն զինկին մէջ մետաղական հաղորդակցութիւնը բանիլ :

4. Իսկ այս գործիքիս մէջ գլխաւոր այս բանս կայ զիտելու որ մետաղյին աղը կամ պղնձի ծծմբուտը որ լուինք , քանի կ'երթայ իր զօրութիւնը կը կորմնցընէ իր մետաղյին մասնը կանց կաղպարին վրայ նստելովը , անոր համար հարկ կ'ըլլայ երբեմն երբեմն անօթին մէջ նոր պղնձի ծծմբուտի բիւրեղացեալ կտորուանքներ նետել . բայց աւելի լաւ է այդ կտորները բարակ լութէ քսակի մը մէջ լեցուցած , ամանին վերի կողմէն հեղանիւթին մէջ կախել ինչպէս կը տեսնես 1 Ձեին մէջ Ք . որ քանի պղնձային մասնը կունքը պակսի հեղանիւթէն , իրենք մէկալ կողմանէ հալելով , պակսածին տեղը լեցընէն :

1 Երբոր հաղորդիչ թելերը միացընել կ'ըսենք : հարկ չէ մետաղով փակցընել (ՏՀ. Լէհինել) , հապա բաւական է պրկել . և կամ պտուտակով չզմել :


որով հեղանիւթը միշտ յագեալ վիճակի մէջ մնայ :

5. Այս է ահաւասիկ Պարզ կազմարանին ստորագրութիւնը . և ինչպէս տեսանք , կաղապարը՝ որուն վրայ լուծուած մետաղին մատաղը պիտի նստի , վոլդայեան բարդին մէջ կը մտնէ , և անոր գլխաւոր մասը կ'ըլլայ , այսինքն անոր պղնձէ մերժական տարերքին տեղը կը բռնէ . ընդհանրապէս մանր մունր կաղապարներու համար ասիկայ կը գործածուի , ինչպէս են մետալներ , տամէնէր , որով հետեւ պէտք չկայ աւելի ծախք մը ընել և զատ պղնձէ անօթ գործածել , ինչպէս պիտի տեսնենք երբոր զատուած բարդերու վրայ խօսելու ըլլանք :

6. Բաղադրեալ կաղմարանին . — Պարզ կաղմարանին վրայ մէկ մեծ փոփոխութիւն մը մտածեցին ընել Առուսաստանի մէջ Խագոպի , և Անգղիոյ մէջ ալ ՈՒԷսըն : Եւ այս է իրենց գլխաւոր հնարքը որ կաղապարը վոլդայեան բարդէն զատեցին : Ա ոլդայեան բարդին պղնձի տարերքէն ելած հաղորդիչ թելին ծայրը անցուցին պղնձի թիթեղ մը , իսկ զինկէն ելածին ծայրը կաղպարը հաստատեցին , և այս երկուքը պղնձի թիթեղը և կաղապարը ուրիշ անօթի մը մէջ կախեցին դիմացէ դիմաց , որուն մէջ քանի մը կաթիլ ծծմբային թթու , երկու մաս յագեալ պղնձի ծծրմբուտ և վեց կամ ութը մաս ջուր լեցուցած էր :

7. Խտեկի պատկերով աւելի լաւ կ'ըմբռնենք ըսածնիս (Ձև 2) : Ա ամանը վոլդայեան բարդ մըն է , իսկ Բ ամանը

Ձև 2.



բուտը լուծուած . աբ կաղպարներն են , և հաղորդած է բարդին Զ զինկի տարբին հետ . իսկ Ա պղնձի թիթեղ

մըն է և հաղորդած բարդին Պ պղնձի տարբին հետ . և այս թիթեղը համանիւթ պէտք է որ ըլլայ լուծուած մետաղին հետ : Արդ այս կաղմարանը երբոր բանեցընել ուզես , նախ լեցու իւրաքանչիւր հեղանիւթը իր ամանին մէջ , վերջը Ա պղնձի թիթեղը կախէ Բ ամանին մէջ և արոյրէ թելով մը բարդին Պ պղնձին հետ հաղորդէ . նոյնպէս աբ գաւաղանն ալ Զ զինկէ բեկեռին հետ հաղորդէ . ասոնք ընելէդ վերջը , (և ոչ երբէք առաջ)¹ , աբ գաւաղանէն շուտով մը կախէ ուզած կաղպարներդ :

8. Բաղադրեալ կաղմարանին առջինէն ունեցած տարբերութիւնն այս է գլխաւոր , որ ինչպէս ըսինք , կաղապարը բարդին զատուած է , և իր վրայ նըտելու մետաղային լուծուած հեղանիւթին հետ միատեղ առանձին ամանի մէջ կը կենայ , որ Լագարան , կամ նաև Գուսա լուծնան² կը կոչուի . և հոն ինքը մերժական բեկեռին տեղը կը բռնէ բարդին զինկի՝ այսինքն զրական բեկեռին հետ հաղորդուելով . իսկ բարդը , որ հոս նաև Նիւթաբէր կաղմարան³ ալ Կ'անուանի , իրեն պղնձի կամածիսի բեկեռն ալ պղնձի լուծանելի թիթեղին հետ :

9. Եւ այս բաղադրեալ կաղմարանով կրնանք դիւրաւ խել մը մետալներ մէկէն ձուլել , ինչպէս պատկերին մէջ կ'երեայ , շատը մէկտեղ կախելով հաղորդիչ գաւաղանէ մը , կամ իւրաքանչիւրը առանձին հաղորդիչ թելերով զինկին հետ միացընելով . կամ աւելի լաւ՝ լոգարանին մէջ տեղին պղնձի լուծանելի թիթեղը կախելով , և այս թիթեղին երկու կողմէն ալ ուզած կաղպարներդ զուգահեռական զետեղելով , և ամէն մէկը հաղորդիչ թելերով միացընելով զինկին հետ : Դարձեալ ասով մէկ վոլդայեան զոյգի տեղ շատ

¹ Վասն զիքանի որ հոսանքը սկսած չէ . պղընձային լուծուածքը մետաղային կաղպարներուն դպչելով . կրնայ անոնց երեսը մաշեցընել և թթուիկ կապել տալ . այսինքն ժանդուել :

² Գլ . Bain կամ Cave : décomposition .
³ Գլ . Appareil génératuer .

կամքիչ տարերքներ կրնաս գործածել որչափ որ հարկաւոր ըլլայ՝ հոսանքին ոյժը սաստիացընելու կամ նուազեցընելու համար . նոյն վախճանին կը հասնիս դարձեալ մեծցընելով կամպղտիկցընելով տարրը :


10. Ի՞այցքան զասոնք աւելի՝ այս օգուտն ունի որ Լուծանելք Ելեկտրաբէր՝ կամ մետաղէ թիթեղ կրնանք գործածել ասով. որով չէ թէ միայն ալ հարկաւոր ըլլար պղնձի ծծմբուտ մէջը ձգել, հապանակ շատ խնայութիւններ ալ կ'ըլլայ: Իշտ այս լուծանելի ելեկտրաբէր ըսածը ուրիշ բան չէ, բայց եթէ այն պղնձէ թիթեղը որ կաղպարներուն դիմացը զուգահեռական կախել տուինք լոգարանին մէջ, որ և միշտ համանիւթ պիտի ըլլայ ըսինք լուծուած հեղանիւթին. վասն զի քանի որ ծծմբուտին պղնձէ մասնըկունքը կաղպարին վրայ նստին, ծծմբային թթուն որ զատուած կը մնայ, պղնձի թիթեղին հետ միանալով, նոր պղնձի ծծմբուտ կը ձեացընէ պակսածին տեղը, որով լուծան խտութիւնն ալ հաւասար աստիճանի մէջ կը պահուի, և ելեկտրական հոսանքն ալ միակերպ կը մնայ, որ ծծմբային թթուին մինակ մնալովը պիտի սաստիկանար :

11. Ի՞այպէս առանձին լոգարան գործածելը շահաւոր է, որ մարտկոցին տարերքը քիչ մաշեցընելով՝ կրնանք շատ կաղպարներ մէկէն ձուլել: (Ճինակի համար թէ որ երկու հողէ ամաններ քովիչ քով դնելու ըլլանք լոգարանի տեղ, և մէկուն մէջ պղնձէ թիթեղը դնելու ըլլանք և մէկալին մէջ կաղպարը, և զասոնք պղնձէ թելով մը իրարու հաղորդենք՝ թելին երկու ծայրերը երկու գաւաթներուն հեղանիւթին մէջ թաթխելով, կրնայ վոլգայեան հոսանքը անընդհատ վագել. որով գաւաթներէն մէկուն մէջ եղած պղնձէ թիթեղը կը սկսի լուծուիլ, ինչպէս վերը լուծանելի ելեկտրաբէրին համար ըսինք, և կ'երթայ հաղորդիչ թելին

ծայրը կը ժողվուի . իսկ մէկալին մէջն ալ նոյն պղնձէ թելին ծայրը լուծուելով, կաղպարին վրայ կը նստի : Ուրեմն թէ որ առջի գաւաթին մէջի պղնձէ թելին ծայրը այնպիսի կաղպար մը անցընելու ըլլանք, որ յարմար ըլլայ լուծուած պղնձը իր վրան առնելու, և մէկալ ծայրն ալուրիշ պղնձէ թիթեղ մը պղնձէ թելին տեղ, մէկ մարտկոցով երկու կաղպար մէկէն հանած կ'ըլլանք :

12. Ի՞այս սկզբան վրայ լուսըն անգղիացին մէկ նոր կաղմարան մը շնուց: Ի՞ւաւ Ա ամանը (Ձև 3), և մէջը զրաւ պղնձի ծծմբուտը, միջնափակը և զինկը վերիշ կերպով (§. 2). և ուրիշ տափակ ու նեղ լոգարանիմը մէջ ալ կա:

Ձև 3.




խեց է կաղպարը և Զ զինկին հետ հաղորդեց . վերջը առաւ ուրիշ միտալ մ'ալ, և բարդին պղնձի ծծմբուտին մէջ կախեց զուգահեռական զինկին, և թելով մը միացուց Պ պղնձէ թիթեղին հետ որ լոգարանին մէջ կախուած էր է կաղպարին դիմացը : Ի՞այց գիտնալու է որ ըսած միջնափակնիս շատ բարակ պէտք է որ ըլլայ :

13. Լուս օգուտն ինչպէս ըսինք այս է որ մէկ զինկ մաշեցընելով՝ կրկին կաղպար կը ձուլուի . որ եթէ զատ զատ առնէինք և ձուլէինք, կրկնապատիկ զինկ հարկ կ'ըլլար գործածել. բայց ասով նոյն զինկին զօրութիւնը որ մէկուն համար միայն պիտի գործածուէր, երկրորդին համար ալ կը ծառայէ . բաւական է որ ելեկտրաբէրը երկուքին ալ հասնի, և բարդին զօրութիւնը չտկարանայ: — Ի՞այս հիմամբ կրնանք նաև երկուքէն ալ աւելի կաղպարներու վրայ այդ շահը ընել, երբոր ամին

1 Լաւ կ'ըլլայ թելին այն մասը որ թթուին մէկ մանէ, չմաշելու համար խէժով մը պատել:

մէկուն առանձին ելեքտրաբեր դնենք ,
որ գործողութիւնը շուտով լմննայ , ո-
րով և զինկին մաշելու ժամանակը կը
կարծի , և երբոր առանձին գուռ հաս-
տատենք ամէն մէկ կաղպարին , որով իւ-
րաքանչիւրը իրը մէկմէկ պարզ կազ-
մարաններ մէկտեղ բերած բարդին զօ-
րութիւնը կ'աւելցընեն : Եւ այս գուռ-
ներուն չափաւոր թիւր վեցն է :

244.



14. (Ձե 4) Աը բարգն է : Խակ
Բ մնտուկը վեց կտոր բաժնուած է
ծակոտիկէն միջնափակներով : Խա այս
միջնափակներուն ամէն մէկուն վրայ
հեծցուցած է հինգ հատ մետաղային
թելեր ա , ա , ա , ա , ա , որոնց իւրաքան .
չիւրին մէկ ծայրը է , է , . . . կաղպարնե-
րը կախուած էն , և մէկալ ծայրն ալ
է , է , . . . լուծանելի ելեքտրաթերներ ,
և երկուքն ալ հեղանիւթին մէջ թաթ-
խուած . և ամէնն ալ նոյն զրբով կա-
խուած , անանկ որ նոյն խորշին մէջ մէ-
կուն պղինձը և մէկալին կաղպարը գը-
տուի : — Ի դրտ ամէն բանէ առաջ , երը
որ պիտի սկսիս գործածել , Բ մնտուկին
ամէն խորշերը ուզած աղային հեղա-
նիւթով լեցու , ինչպէս ըսինք պղնձի
ծամբուտով , և Ա վոլգայեան բարդն
ալ շտկէ . վերջը նախ Պ պղնձէ զբական
բեեռը հաղորդէ Բ առջի խորշին մէջ
է ելեքտրաթերին հետ , և Զ զինկի
մերժական բեեռն ալ Պ վերջին խոր-
շին հետ , և կախէ հան շուտ մը է կաղ-
պարը . Երկու րոպէի մէջ կը տեմնես որ
կաղպարին երեսը պղնձով կը ծածկուի ,
և ալ հեղանիւթէն չմաշիր (§. 7 Ծան .):
Իս որ եղաւ , հանէ անկէ նոյն թելին
հայրը որ երկու ծայրի խորշերը իրարու

կը հաղորդեր , և անոր քովի խորշն
մէջ խոթէ , և առջի էակ թելն ալ կա-
խէ իր կաղպարովը և պղինձ թիթե-
ղովը . քանի մը վայրկեանէն կը տես-
նես որ այս նոր կաղպարն ալ կը ծած-
կուի բարակ պղինձ մաշկով մը : Վոյն-
պէս ըրէ երրորդ խորշն , չորրորդին ,
ինչուան վերջը :

15. Պիտոնալու է որ գուռերուն թիւը
աւելցընելով լուծման զօրութիւնը նուա-
զեցընելու է անոր համեմատ շատ ջուր
դնելով. և որպէս զի դիւրահաղորդ ալ
ըլլայ, թթուն աւելցընելու է. իւ դար-
ձեալ որչափ կարելի է նայելու է որ
պղնձէ թիթեղները և կաղպարները ի-
րարու մօտ դրուին: Այդպիսի միազցդ
բարդ մը կրնայ վեց կաղպար երեք օ-
րուան մէջ ձուլել, թէ որ քիչ մը տաք-
ցուցած ըլլայ: Այս բանիս համար մի
միայն յարմար է Ուղլասդընի մարտկո-
ցին խորշաւոր անօթը գործածել, որ
ընդհանրապէս տասուերկու բաժնած է.
բայց կրնայ այսպէս գործածուիլ. կէ-
սը մէկ բարդով, կէսն ալ ուրիշ բար-
դով, որով 24 կաղպար մէկէն կրնայ
հանուիլ մէկ շաբթուան մէջ: Այց այս
թէ որ ըլլայ, կրնայ փայտէ շինուիլ և
վերնիձոտուիլ: Ո՞իովքանիւ, այս կեր-
պիս իննայողութիւնը այն աստիճանի է,
որ ամենուն յայտնի կ'երեայ. վասն զի
իւրաքանչիւր կաղպարին վերայ որ մէյ-
մէկ ունկի պղնձն նստի, անդին ամե-
նուն համար մէկ ունկի զինկէն ալ աւե-
լի չմաշիր, թէպէտ քիչ կամ շատ է ե-
ղեր կաղպարներուն թիւը:

ՊԵՏՐՈՎԸՆ

የዕለታዊ የደንብ ማረጋገጫ በመሆኑ እና የሚከተሉት ምክንያት ይመዘኗል፡፡

Օր մը Ֆոնդընէլ գաղղիսցի մատենագրին բարեկամներէն մէկը իրեն այցելութեան կու գայ . և տեսնելովոր Ֆոնդընէլախրած շփոթած մասած ման մէջ է , կը հարցնէ . Բարեկամ , ի՞նչ ունիս՝ որ այդպէս այլայլած կը տեսնեմ զքեզ : — Ֆոնդընէլ ի՞նչ պիտի ունենամ , կ'ըսէ . ծառայ մը ունիմ տանս մէջ՝ այնպէս հօգիս բերանս կը բերէ , որ կարծես թէ բասան ծառայ բռնած էմ :